# EU4BUSINESS | EBRD
# Credit Line

*ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման և խորհրդատվության ծրագիր*

## Կառուցում ենք ժամանակակից, կանաչ և շահութաբեր ՓՄՁ-ներ Հայաստանում՝ դրամաշնորհային աջակցությամբ վարկերի օգնությամբ

European Bank for Reconstruction and Development

EU4Business

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ի՞նչ է EU4Business-EBRD Վարկային գիծը: 2

Ինչպե՞ս է աշխատում ծրագիրը: 3

Ինչպե՞ս է աշխատում Ստանդարտ նախագծերի համար նախատեսված LET մոտեցումը: 4

LET մոտեցման ներդրումայն օրինակներ: 5

Ինչպե՞ս է աշխատում Պարզեցված մոտեցումը: 6

Պարզեցված նախագծերի օրինակներ: 7

Ինչպե՞ս է աշխատում Համալիր մոտեցումը: 8

Համալիր նախագծերի օրինակներ: 9

Մեր Գործընկեր Բանկերը: 10

Ընդլայնեք Ձեր ներդրումային հնարավորությունները Նոու-Հաուի միջոցով: 12

Ովքե՞ր կարող են դիմել EU4Business-EBRD Վարկային գիծն ու կանխիկի եռվերադարձը ստանալու համար: 13

# Ի՞ՆՉ Է EU4BUSINESS-EBRD ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾԸ:

EU4Business-EBRD Վարկային գիծն օգնում է հայաստանյան ՓՄՁ-ներին մուտք գործել ԵՄ շուկա, համապատասխանացնել իրենց գործունեությունը ԵՄ Դիրեկտիվներին՝ կայուն ներդրումների և տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև համապատասխանել ամենաբարձր չափանիշներին՝ արտադրանքի որակի, անվտանգության, աշխատանքային առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության և կանաչ տեխնոլոգիաների առաջխաղացման ոլորտներում:

EU4Business-EBRD Վարկային գիծն առաջարկում է.

- Գործընկեր Բանկերի և լիզինգային ընկերությունների միջոցով տրամադրվող EBRD վարկեր,
- EU4Business նախաձեռնության կողմից տրամադրվող գումարի ետվերադարձ (քեշբեք)՝ հաջողությամբ հաստատված նախագծերի համար,
- Անվճար տեխնիկական աջակցություն, որը տրամադրվում է մասնագետների միջազգային թիմի կողմից: Աջակցության շնորհիվ ՓՄՁ-ները կկարողանան ընտրել լավագույն լուծումներն իրենց նախընտրած ներդրումային նպատակների համար:

**Բարձրացրեք Ձեր արտադրանքի որակը և արդյունավետ մրցեք հայաստանյան և ԵՄ շուկաներում:**

**Համապատասխանեցրեք Ձեր գործունեությունը ԵՄ Դիրեկտիվներին և ստացեք ավելի մեծ շահույթ:**

**Առաջնահերթությունը տվեք Կանաչ Տեխնոլոգիաներին՝ ծախսերի կրճատման և պատասխանատու գործունեության նպատակով:**

**Վարկային գիծը նախատեսված է այն ՓՄՁ-ների համար, որոնք ցանկանում են արդիականացնել իրենց սարքավորումները և դրանով իսկ մեծացնել արտահանման հնարավորությունները:**

# ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ:

Վարկի երեք տեսակները միտված են տարբեր ընկերությունների բազմազան պահանջները բավարարելուն:

### ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄՄԱՄԲ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Մինչև 300,000 եվրոյին համարժեք դրամ պարզ սարքավորումների արդիականացման համար՝ Համապատասխանող տեխնոլոգիաների ցանկի (LET) հիման վրա: Գործում է **կանխիկի ետվերադարձ (քեշբեք) մինչև 10%**:

### ՊԱՐԶԵՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

ՍՖՍ (Սանիտարական և Ֆիտոսանիտարական), ինչպես նաև սննդի անվտանգության նախագծերի համար արագացված ընթացակարգ, մինչև 300,00 եվրոյին համարժեք դրամ ներդրումների համար: Գործում է **կանխիկի ետվերադարձ (քեշբեք)՝ 15%-ի** չափով:

### ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄ

Մինչև 3 միլիոն եվրոյին համարժեք դրամ ներդրումների համար, որոնք կարող են օգտագործվել գրեթե ցանկացած ձեռնարկատիրության կողմից, գրեթե ցանկացած ոլորտում: Գործում է **կանխիկի ետվերադարձ (քեշբեք) մինչև 15%**:

# ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ:

## LET նշանակում է Համապատասխանող Տեխնոլոգիաների ցանկ

Երբ անհրաժեշտ են պարզ ներդրումներ, որոնց ծավալները չեն գերազանցում 300,000 եվրոյին համարժեք դրամը, ապա կարող է օգտագործվել Համապատասխանող Տեխնոլոգիաների ցանկը: Այն պարունակում է մի քանի հազար միավոր նախնական հաստատում ստացած սարքավորումներ: Ցուցակին կարելի է ծանոթանալ LET Տեխնոլոգիական Սելեկտորում, որտեղ ներկայացված են հաստատված սարքավորումները (www.list-of-eligible-technologies.com):

LET-ը դինամիկ մոտեցում է, վերջինիս շնորհիվ նոր տեխնոլոգիաները Տեխնոլոգիական Սելեկտորում են ավելացվում պարբերաբար: Եթե Ձեր նախընտրած սարքավորումները Սելեկտորում նշված չեն, ապա կապ հաստատեք մեր ծրագրի թիմի հետ և մենք կգնահատենք, արդյոք նախընտրած սարքավորումները կարող են ավելացվել ցուցակում:

Մանրամասների, ինչպես նաև LET դիմումի ձևի համար այցելեք մեր կայք www.eu4business-ebrdcreditline.am/en/standard-approach/



## Ցուցակում առկա LET տեխնոլոգիաների օրինակներ

- *Շինարարական սարքավորումներ*
- *Սննդի վերամշակման սարքավորումներ*
- *Ջեռուցման/հովացման համակարգեր*
- *Ադրյունաբերական օժանդակ սարքավորումներ*
- *Մշակման սարքավորումներ*
- *Վերականգնվող էներգիա*

Եթե Ձեր նախընտրած սարքավորումները բացակայում են ցանկում, ապա Դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ՝ ներկայացնելով մանրամասները, և մենք կգնահատենք սարքավորումների համապատասխանությունը:

Տպագրական ընկերությունը, որն իր հաճախորդներին է տրամադրում ներքին և արտաքին օգտագործման մի շարք տպագիր ապրանքներ, ներդրումներ է կատարել ուլտրամանուշակագույն տպագրիչ սարքավորման և օժանդակ սարքավորումների մեջ: Տպագրության այս տեխնիկայի հիմնական առավելությունը պատկերի ճշգրտության ավելի բարձր մակարդակն է, ինչպես նաև վերջնական արտադրանքի բարձր դիմադրողականությունը եղանակային պայմաններին: Ներդրումների շնորհիվ ընկերությունը բարելավեց արտադրանքի որակը և արտահանման հզորությունները՝ էականորեն նվազեցնելով էներգիայի սպառումը և ածխածնի արտանետումները:

**Վարկի գումար:** 99,276 եվրոյին համարժեք դրամ
**Կանխիկի ետվերադարձի գումար:** 9,927 եվրոյին համարժեք դրամ
**Էներգիայի առաջնային խնայողություն:** 17.4 կՎտժ/տարի
**Ջգ նվազեցում:** 1.2 տոննա $CO_2$/տարեկան

Գոլորշու կաթսաներ, մետաղական ցիստերններ, ջրամբարներ և տարաներ արտադրող ընկերությունը ներդրում է կատարել լազերային կտրող մեքենայի մեջ: Վերջինիս օգնությամբ ընկերությանը հաջողվեց բարձրացնել արտադրանքի որակը, նվազագույնի հասցնել նյութական թափոնները և բարելավել աշխատողների առողջությունն ու անվտանգությունը:

**Վարկի գումար:** 270,126 եվրոյին համարժեք դրամ
**Կանխիկի ետվերադարձի գումար:** 27,013 եվրոյին համարժեք դրամ
**Էներգիայի առաջնային խնայողություն:** 106 կՎտժ/տարի
**Նյութերի խնայողություն:** 146 տոննա/տարի
**Ջգ նվազեցում:** 17կգ CO2/տարի
**Էներգիայի խնայողության հարաբերակցություն:** 35%



# ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ:

Պարզեցված մոտեցումը մշակվել է այն ներդրումների համար, որոնք ուղղված են ԵՄ ՍՖՍ (Սանիտարական և Ֆիտոսանիտարական) կամ Սննդամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգերին և չափանիշներին լիարժեք համապատասխանելու համար: Ներդրման գումարը կազմում է մինչև 300,000 եվրոյին, կանխիկի եռվերադարձը (քեշբեք)՝ մինչև 15%: Ավելին իմանալու համար այցելեք website www.eu4business-ebrdcreditline.am/en/simplified-approach/



# ՊԱՐԶԵՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- *Արտադրության և պահեստավորման շենքերի վերանորոգում*
- *Փչացող ապրանքների սառը պահեստավորում*
- *Մշակման, փաթեթավորման և պիտակավորման սարքավորումներ*
- *Գործընթացների կառավարման ավտոմատացված համակարգեր*
- *Լաբորատորիաներ*
- *Ապրանքի և (կամ) Վտանգների Վերլուծության և Հսկման Կրիտիկական Կետերի համակարգի սերտիֆիկացման ծախսեր*

*Չրերի (չորացրած մրգերի) և բժշկական խոտաբույսերի արտադրողը բարելավել է արտադրանքի որակը և ավելացրել արտահանումը՝ ներդրումներ կատարելով նոր չորանոցի, լվանալու և կտրատման սարքավորումների և տերևի մամլիչ մեքենայի մեջ:*

**Ներդրումներ.** *Վերամշակման և արտադրության շենքի կառուցում, հումքի վերամշակման սարքավորումներ, գոտի չորանոց, հավաքման թիմի ուսուցման կենտրոն, հումքի պահեստ*

**Վարկի գումարը** ՝ 129,090 եվրոյին համարժեք դրամ

**Կանխիկի ետվերադարձի գումարը (15%)** ՝ 19,363 եվրոյին համարժեք դրամ

**ԵՄ Դիրեկտիվները կատարված են.**

- Կանոնակարգ (ԵՀ) թիվ 834/2007 օրգանական ապրանքի օրգանական արտադրության և մակնշման, և ուժը կորցրած կանոնակարգ (ԵՏՀ) թիվ 2092/91
- Կանոնակարգ (ԵՀ) No 178/2002, որը սահմանում է սննդի մասին օրենքի ընդհանուր սկզբունքներն ու պահանջները, ստեղծվում է Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմնի կողմից, սահմանում է սննդի անվտանգության հարցերում ընթացակարգեր
- Կանոնակարգ 2023/2006 սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերի և իրերի արտադրության ճիշտ պրակտիկայի մասին

*Հավկիթ արտադրող ընկերությունը ներդրումներ է կատարել նոր մեքենաների մեջ և ներդրել է տեսակավորման և փաթեթավորման բարձրորակ գործընթացներ, դրանով իսկ ապահովելով սննդի անվտանգությունն ու հիգիենայի մակարդակի բարձրացումը արտադրության գործընթացում:*

**Ներդրումներ.** Հավկիթի դասակարգման և փաթեթավորման մեքենայի գնում և տեղադրում

**Վարկի գումարը.** 253,713 եվրոյին համարժեք դրամ

**Կանխիկի ետվերադարձի գումար (15%).** 38,056 եվրոյին համարժեք դրամ

**ԵՄ Դիրեկտիվները կատարված են.**

- ԵՄ կանոնակարգ 2023/2006 սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերի և իրերի արտադրության ճիշտ պրակտիկայի վերաբերյալ
- Հումքի հիմնական բնութագրերը, հրատարակություն 5, որը ներառում է (խմբաքանակի հետագծելիություն ԵՄ կանոնակարգ No178/2002, մանրէաբանություն, ծանր մետաղներ, միկոտոքսիններ, մնացորդների փաթեթավորում և այլն)
- Կանոնակարգ (ԵՀ) No 178/2002, որը սահմանում է սննդի մասին օրենքի ընդհանուր սկզբունքներն ու պահանջները, ստեղծվում է Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմնի կողմից, սահմանում է սննդի անվտանգության հարցերում ընթացակարգեր

# ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ:

Համալիր մոտեցման շրջանակներում ֆինանսավորվում են այն նախագծերը, որոնք ուղղված են Առողջության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության և արտադրանքի որակի և անվտանգության բնագավառում ԵՄ առնվազն մեկ կամ մի քանի Դիրեկտիվների համապատասխանելիությանը: Այս մոտեցմամբ վարկի հնարավոր առավելագույն գումարը կազմում է 3 մլն եվրոյին համարժեք դրամ, իսկ կանխիկի եռվերադարձը (քեշբեք) կարող է լինել մինչև 15%: Դիմումի գործընթացն անվճար աջակցվում է մեր տեխնիկական թիմի կողմից:

Ավելին իմանալու համար այցելեք www.eu4business-ebrdcreditline.com



# ՀԱՄԱԼԻՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- *Նոր մեքենաներ, արտադրական սարքավորումներ, հոսքագծեր*
- *Նոր կաթսաներ, հովացման համակարգեր, ջերմային պոմպեր*
- *Արտադրական շենքերի վերանորոգում և կառուցում*
- *Արտադրության գծերի և շենքերի ինտեգրված հիմնանորոգում և կառուցում*
- *Պահեստների, սառնարանների, ներառյալ ներքին տրանսպորտային միջոցների պահեստների վերանորոգում և կառուցում*
- *Փաթեթավորման սարքավորումներ*
- *Օդափոխության և փոշու նվազեցման համար նախատեսված համակարգեր*
- *Կեղտաջրերի մաքրման կայաններ*
- *Մթնոլորտային արտանետումների նվազեցման կայաններ*

Մեղրի արտադրող, ով ունի 500 սեփական փեթակ և բնական, առանց հավելումների մեղր ապահովող բնական մեղվաբույծների չափազանց արդյունավետ ցանց, իր բիզնեսը հասցրեց նոր բարձունքների: Ածխածնի արտանետումները նվազեցնելու նպատակով ընկերությունը ներդրում կատարեց վերամշակման և պահեստավորման սարքավորումների, ինչպես նաև արևային վահանակների մեջ՝ ամբողջությամբ ծածկելով արտադրության համար անհրաժեշտ էներգիայի կարիքները: ԵՄ ֆինանսավորմամբ ՎԶԵԲ -ի «Խորհրդատվություն փոքր բիզնեսին» ծրագիրը նույնպես աջակցեց ընկերությանը՝ ստեղծելու բարձրորակ բրենդինգ, լավ փաթեթավորում և գերազանց վեբ-կայք իր արտահանման վաճառքները խթանելու նպատակով:

**Վարկի գումար:** 350,000 եվրոյին համարժեք դրամ

**Կանխիկի ետվերադարձի գումար:** 52,500 եվրոյին համարժեք դրամ

**Էներգիայի առաջնային խնայողություն:** 1,370Gj/տարեկան

**Ջգ նվազեցում:** 76 $tCO_2$/տարեկան

**GHG savings:** 76 $tCO_2$/year

Մետաղական արտադրանքի լայն տեսականի արտադրող ընկերություն, այդ թվում, թիթեղներ, ցանկապատեր, մետաղական ճառագայթներ, խողովակներ և լարեր: Ներդրումներ կատարվեցին մետաղների մշակման նորարար և էկոլոգիապես մաքուր սարքավորումների մեջ: Արդիականացված արտադրական օբյեկտները բարելավել են աշխատակիցների աշխատանքային պայմաններն ու անվտանգությունը, ինչպես նաև արտադրական գործընթացները դարձրել են ավելի էներգաարդյունավետ՝ տարեկան ավելի քան 80tCO-ով նվազեցնելով ընկերության ածխածնի հետքը :

**Վարկի գումար:** 494,902 եվրոյին համարժեք դրամ

**Կանխիկի ետվերադարձի գումար:** 74,235 եվրոյին համարժեք դրամ

**Էներգիայի առաջնային խնայողություն:** 919 MWh/տարեկան

**Ջգ նվազեցում:** 81 $tCO_2$/տարեկան



# ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԲԱՆԿԵՐԸ

**ՈՐՏԵՂ ԴԻՄԵԼ**

Ֆինանսական գործընթացի պարզության և դյուրինության համար վարկերը տրամադրվում են ծրագրի Գործընկեր Բանկերի և Լիզինգային Ընկերությունների միջոցով: Գործընկերները ծրագրի ընթացքում ստանում են խորհրդատվություն և աջակցություն ծրագրի Խորհրդատուների կողմից:

**ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարկի պայմաններն, ինչպես նաև տվյալ ընկերությանը վարկ տրամադրելու որոշումը կայացվում է Գործընկեր Բանկի և/կամ Լիզինգային ընկերության կողմից: ՎԶԵԲ-ը, ԵՄ-ն ու ծրագրի Խորհդրատուները չունեն ազդեցություն այս որոշման վրա:

**ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագրի Խորհրդատուները պատասխանատու են ներդրումային ծրագրերի տեխնիկական գնահատման համար: Վերստուգող խորհրդատուի հետ միասին: Նրանք նաև պատասխանատու են կանխիկի ետվերադարձի գումարների սահմանման և ստուգման համար: Գործընկեր Բանկերը և/կամ Լիզինգային ընկերությունները քեշբեքը (կանխիկի ետվերադարձը) կվճարեն հաջողությամբ իրականացրած նախագծերի սեփականատերերին: Սակայն, Գործընկեր Բանկերը և/կամ Լիզինգային Ընկերությունները ազդեցություն չունեն վճարման ենթակա դրամաշնորհների չափսի վրա:

# ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գինու գործարանը, որն արտադրում է տարեկան 2 միլիոն շիշ, արդեն իսկ ստանձնել է շրջակա միջավայրի և սպառողների անվտանգության բարձր չափանիշները ներդնելու ուղին: Բնապահպանական և սոցիալական պատասխանատվությունը մշտապես եղել այս ընկերության ուշադրության կիզակետում: Ընկերությունը գինու արտադրությամբ է զբաղվում 130 հա խաղողի այգիներում, ինչպես նաև կառավարում է պատմական տարածքում և պատմական վայրերին հարակից տարածքում գտնվող 185 հա պտղատու այգիների շահագործումը:

Ընկերության կանաչ փիլիսոփայությունն արտացոլված է կաթիլային ոռոգման ժամանակակից համակարգերի և վերականգնվող էներգիայի աղբյուր հանդիսացող մինի-հիդրոէլեկտրակայանի օգտագործման մեջ: Սպառողների անվտանգությունը երաշխավորված է ISO 22000: 2005 Սննդի Անվտանգության կառավարման համակարգով:

Նպատակ ունենալով բարձրացնել իր արտադրական կարողությունները և գինու արտահանման հնարավորությունները՝ ընկերությունը կատարել է ներդրումներ նոր գինու մառանի, ներառյալ գինու պատրաստման և մշակման սարքավորումների ամբողջական փաթեթի մեջ: Ապրանքի որակի բարելավումը, աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումն այս ներդրման լրացուցիչ օգուտներն էին: Ներդրումների արդյունքում ընկերությունը համապատասխանեցրեց իր գործունեությունը ԵՄ բազմաթիվ Դիրեկտիվներին, ներառյալ սարքավորումներին, առողջությանն և անվտանգությանը, թափոնների կառավարմանն առնչվողները:

**Վարկի գումար:** 1,064,943 եվրոյին համարժեք դրամ

**Կանխիկի ետվերադարձի գումար:** 159,741 եվրոյին համարժեք դրամ

**Էներգիայի առաջնային խնայողություն: :** 110 MWh/տարեկան

**Ջգ նվազեցում:** 7.7 $tCO_2$/տարեկան

# ԽԹԱՆԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՎԶԵԲ-Ի ՆՈՈՒ-ՀԱՈՒ ԾՐԱԳՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

ՎԶԵԲ-ի՝ «Փոքր Բիզնեսի Խորհրդատվություն» (Advice for Small Business) ծրագիրը օգնում է հայաստանյան ՓՄՁ-ներին աշխատել տեղական և միջազգային խորհրդատուների հետ՝ տարբեր ոլորտներում ընկերությունների տրանսֆորմացիան ապահովելու նպատակով:

**Բիզնեսի Խորհրդատվություն**

Եթե Ձեր ընկերության համար շահեկան կլինի տեխնիկական գիտելիքների կիրառումը, օրինակ, ISO չափորոշիչների որակի կառավարման համակարգ ներդնելու համար, ապա մենք կարող ենք աջակցել մի շարք ծրագրերի իրականացմանը: Այդ ծրագրերի շրջանակներում սովորաբար ներառվում է որակավորված տեղական խորհրդատուների հետ աշխատանքն, իսկ ծրագրերը հաճախ տևում են 4-6 ամիս՝ բիզնեսը դարձնելով ավելի մրցակցային: Նախագծի արժեքի մինչև 10,000 եվրոն փոխհատուցվում է ծրագրի շրջանակներում:

**Ոլորտային փորձ**

Ապահովեք Ձեր բիզնեսի մրցակցայնությունը միջազգային շուկաներում՝ օգտագործելով Ձեր ոլորտում մեծ փորձ ունեցող միջազգային խորհրդատուի գիտելիքները: Կիսվելով իր գիտելիքներով և փորձով նախկինում բարձրագույն ղեկավարական պաշտոն զբաղեցնող մասնագետը կօգնի Ձեզ նորովի դիտարկել Ձեր բիզնեսի առանձնահատկություններն ու մշակել ներդրումների և աճի համար լավագույն ռազմավարությունը:

Անկախ նրանից, թե խոսքը գնում է բուրդի վերամշակման համար անհրաժեշտ խոնավության մակարդակի, դեղագործական արտադրանքի արտադրության լաբորատոր չափանիշների կամ արտադրական սարքավորումների մասին, միջազգային մասնագետները գիտեն, թե որքան կարևոր են այս հարցերը բիզնեսի համար: Այս նախագծերի միջին տևողությունն է 12-18 ամիս:

**Կապ հաստատեք այլ գործարարների հետ՝ արտահանման մասին ավելի շատ տեղեկություն ունենալու նպատակով**

Արտահանման խթանման համար նախատեսվող ՓՄՁ-ների դասընթացը տալիս է արտահանման հիմնարար գիտելիքներ՝ ճիշտ շուկայի ընտրություն, պրոդուկտի դինամիկա, ԵՄ առանձնահատկություններ: ՎԶԵԲ-ը նաև պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ, դասընթացներ, կապեր ստեղծելու համար նախատեսված հանդիպումներ գործարարների համար: Գրեք knowhowarmenia@ebrd.am էլեկտրոնային հասցեով և միացեք Ֆեյսբուքյան էջին՝ ավելին իմանալու համար:

**ՈԼՈՐՏՆԵՐ**

- ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ,
- ՄԱՐՔԵԹԻՆԳ,
- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ,
- ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
- ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ,
- ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ,
- ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
- ՆԵՐԳԱՀՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ:

# ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՐ

Այն ընկերությունները, որոնք ցանկանում են արդիականացնել իրենց սարքավորումները և/կամ ծառայությունները EU4Business-EBRD Վարկային գծի միջոցով, ինչպես նաև օգտվել կանխիկի եռվերադարձի (քեշբեք) հնարավորությունից, պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին:

- ՓՄՁ տերմինը վերաբերվում է անհատ ձեռներեցներին և սեփականատերերին:
- Ընկերությունները պետք է ունենան 250 հոգուց պակաս աշխատակիցներ և 50 միլիոն եվրոյին համարժեք դրամից պակաս տարեկան շրջանառություն կամ 43 միլիոն եվրոյին համարժեք դրամից պակաս ընդհանուր հաշվեկշիռ:
- Ընկերությունները պետք է գործունեություն ծավալեն արտահանման հնարավորություն ունեցող ոլորտում: Այն ընկերությունները, որոնք գործունեություն են ծավալում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հյուրանոցները, մանրածախ վաճառքը, կդիտարկվեն անհատապես: Եթե ընկերությունը դեռ չի զբաղվում արտահանմամբ, դա ինքնին չի բացառում վերջինիս համապատասխանությունը ծրագրի պայմաններին:
- Ընկերությունը պետք է գրանցված լինի Հայաստանում, գործունեությունը պետք է ծավալվի հիմնականում Հայաստանում՝ Հայաստանի օրենսդրության ներքո:
- Եթե Հայաստանի կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ որևէ այլ քաղաքական, պետական մարմին, գործակալություն կամ ստորաբաժանում մասնաբաժին ունեն բիզնեսում, ապա այդ մասնաբաժնի չափը չպետք է գերազանցի 49%: Ինչպես նաև և վերոնշյալ մարմինը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված լինի ընկերության առօրյա կառավարման մեջ կամ վերահսկողություն ունենա ընկերության ղեկավարման գործընթացի վրա:
- Բիզնեսը պետք է լինի ԱՆԿԱԽ: Անկախությունը սահմանվում է հետևյալ կերպ.
  - Ընկերության բաժնետիրական կապիտալի 50% -ից ավելին չի պատկանում կամ վերահսկվում է այլ ընկերության կողմից: Հակառակ դեպքում ընկերությունը չի բավարարում վերոնշյալ ՓՄՁ սահմանումներին:
  - Ընկերությունը չի հանդիսանում այլ ընկերությունների/ձեռնարկությունների խմբի մաս, չի գտնվում այդ ընկերությունների խմբի ընդհանուր վերահսկողության ներքո, ներգրավված չէ նույն ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների խմբի մեջ, որտեղ այդ խմբի ընդհանուր ցուցանիշները չեն համապատասխանում ՓՄՁ սահմանումներին:
- Ընկերությունը ունի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և գործում է ՀՀ օրենքի ներքո:
- Ընկերությունը ներառված չէ ՎՁԵԲ ֆինանսավորման համար ոչ իրավասու անձանց կամ ընկերությունների ցուցակում:
- Եթե վստահ չեք, որ Ձեր ընկերությունը կամ ձեռնարկությունը համապատասխանում է այս ընդհանուր չափանիշներին, խնդրում ենք դիմել մեր ծրագրի գրասենյակ՝ խորհրդատվություն ստանալու նպատակով:
- Ներդրումային նախագիծը չի օգտվել որևէ այլ խրախուսող ծրագրերից, ներառյալ տոկոսադրույքների սուբսիդավորումը:

# ՈՎՔԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԴԻՄԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՐ

Մենք չենք կարող ֆինանսավորել հետևյալ գործունեությամբ զբաղվող ընկերություններն ու ձեռնարկությունները.

- ճանապարհների և երկաթգծերի կառուցում
- հումքի արդյունահանում և հանքարդյունաբերություն
- ածխածնի ինտենսիվ հանածո վառելիքի այրման, փոխադրման կամ արդյունահանման այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են ածուխը, ջեռուցման յուղը կամ նավթի թերթաքարերը
- բետոնի, ցեմենտի և սվաղի առարկաների արտադրություն
- զենքի կամ ռազմական տեխնիկայի արտադրություն և (կամ) առևտուր
- ֆինանսական հաստատություններ կամ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություններ
- ապահովագրական բիզնես
- ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների արտադրություն
- ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների վաճառք (բացառությամբ այն դեպքերի, երբ ծխախոտի կամ թունդ ալկոհոլային խմիչքների վաճառքը հանդիսանում է ընկերության հիմնական բիզնես գործունեության օժանդակությունը)
- խաղատներ կամ այլ խաղային հաստատություններ
- գույքի կամ արժույթների սպեկուլյատիվ ներդրումներ կամ ցանկացած այլ սպեկուլյատիվ ներդրում
- ներդրումներ ցանկացած տեսակի արժեթղթերում, ներառյալ ներդրումներ այլ ընկերությունների բաժնետիրական կապիտալում
- ՎԶԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական բացառման ցանկում հայտնված ցանկացած գործունեություն

*Նյութը պատրաստվել է Եվրոպական Միության EU4Business նախաձեռնության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետերը Խորհրդատուի տեսակետերն են, և, հետևաբար, դրանք որևէ կերպ չեն կարող ներկայացվել որպես Եվրոպական Միության պաշտոնական կարծիք:*

Մշակում ու աջակցություն

EU4Business

European Bank
for Reconstruction and Development

EU4BUSINESS | EBRD
Credit Line

info.armenia@dcftacreditline.com

www.EU4Business-EBRDCreditline.com

Funded under the EU4Business
Initiative of the European Union